

Փառք Աստուծոյ որ իր պարգեւած առողջութեամբ Աւագներու Խումբը այս տարի եւս ունեցաւ հերթական իր հանդիպումները նախաձեռնութեամբ մեր Հոգեւոր Հովիւին, որուն պատրաստած շահեկան ու հաճելի յայտագիրները անդամներուս պատճառեցին վայելք եւ սփոփանք: Մեր կարողութեան ներած չափով ջանացած ենք օգտակար ըլլալ մեր Եկեղեցւոյ ու նաեւ մասնակցիլ անոր կեանքին ու գործունէութեանց: Մեծ Պահոց ընթացքին մենք եւս բաժին առինք Ուրբաթ օր մը ճաշ հայթիթելու եւ մասնակցելու երեկոյեան պաշտամունքին ու յայտագրին:

Ուրիշ ատեն ալ ուտեստեղէններու վաճառումով եւ հերթական մեր ժողովներէն գոյացած անդամավճարներով ու նուէրներով մեր գանձին մէջ ունինք հիմա 658 տուար: Մեր նպատակն է մեր ունեցածը հասցնել պատկառելի գումարի մը եւ զայն ներկայացնել Եկեղեցւոյ Աւագներու Խումբին կողմէ յիշատակի նուէրով մը, այդու ջանալով օրինակ հանդիսանալ մեր կրտսերներուն եւ գալիք սերունդին:

Մեր անդամներէն Պրն. Մելիք Խաչոյեանի անակնկալ մահը մեզ սուգի մատնեց: Իր ատենին Խումբը իր ցաւակցութիւնը յայտնեց իր այրի Տիկնոջ Վարդուհիին եւ զայն սուգէ հանելու աղօթքին մասնակցեցաւ:

Այս տարի ալ մեր Խումբին ատենապետութիւնը վարեց Տիկ. Աղաւնի Սահակեան: Ատենադպրուհիի պաշտօնը կատարեց Տիկ. Սրբուհի Թորոսեան եւ գանձապահուհիի պարտականութիւնը կատարեց Տիկ. Մինա Մանուկեան:

Սրբուհի Թորոսեան
Ատենադպրուհի

Աղաւնի Սահակեան
Ատենապետուհի